

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ Կրաստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունների բարենպաստ զարգացումը,

առաջնորդվելով երկու երկրների միջեւ, ինչպես նաեւ նրանց տարածքներով տարանցիկ ավտոմոբիլային հաղորդակցությունը զարգացնելու ձգտումով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

#### ՀՈՂՎԱԾ 1

Սույն Համաձայնագրին համապատասխան իրականացվում են ուղեւորների (ներառյալ՝ զբոսաշրջիկների) եւ բեռների կանոնավոր եւ անկանոն ավտոմոբիլային փոխադրումներ երկու երկրների միջեւ եւ նրանց տարածքներով՝ տարանցիկ, Հայաստանի Հանրապետությունում եւ Կրաստանում գրանցված ավտոտրանսպորտային միջոցներով, միջազգային ավտոմոբիլային հաղորդակցության համար բաց ճանապարհներով:

#### ՀՈՂՎԱԾ 2

"Փոխադրող" տերմինը նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը Կողմերի ներքին օրենսդրությանը համապատասխան լիազորված է կատարել միջազգային փոխադրումներ:

"Ավտոտրանսպորտային (տրանսպորտային) միջոց" տերմինը նշանակում է.

1) բեռների փոխադրումների ժամանակ՝ բեռնատար ավտոմեքենա, կցորդով բեռնատար ավտոմեքենա, ավտոմոբիլային քարշակ կամ կիսակցորդով ավտոմոբիլային քարշակ, կիսակցորդ, որոնք գրանցված են Կողմերից մեկի տարածքում,

2) ուղեւորների փոխադրումների ժամանակ՝ ավտոբուս, այսինքն՝ ավտոտրանսպորտային միջոց, որը նախատեսված է ուղեւորներ փոխադրելու համար եւ ունի ոչ պակաս, քան 8 նստատեղ՝ չհաշված վարորդին, ինչպես նաեւ կցորդ՝ ուղեւորների ուղեբեռները փոխադրելու համար, որոնք գրանցված են Կողմերից մեկի տարածքում:

"Թույլտվություն" (երթելեկության փաստաթուղթ) տերմինը նշանակում է փաստաթուղթ, որը Կողմերից մեկի ավտոտրանսպորտային միջոցին թույլատրում է մուտք գործել եւ դուրս ելնել մյուս Կողմի տարածքից:

"Զվոտա" տերմինը նշանակում է թույլտվությունների քանակ, որը ամեն տարի համաձայնեցվում է Կողմի իրավասու մարմինների կողմից:

"Կանոնավոր փոխադրումներ" տերմինը նշանակում է ավտոտրանսպորտային միջոցներով իրականացվող ուղեւորների փոխադրումներ նախօրոք համաձայնեցված երթուղով, չվացուցակով եւ սակագնով՝ սկզբնական եւ վերջնական կետերի եւ կանգառների նշումով:

"Փակ դռներով փոխադրումներ" (զբոսաշրջային փոխադրումներ) տերմինը նշանակում է միեւնույն կազմով ուղեւորների խմբի փոխադրումներ սույն ավտոտրանսպորտային միջոցով, որը չի կատարում ուղեւորների նստեցում եւ իջեցում նստեցման կետից վերադարձի կետ, ընդ որում այդ կետերը գտնվում են այն երկրի տարածքում, որտեղ գրանցված է ավտոտրանսպորտային միջոցը:

"Տարանցիկ փոխադրումներ" տերմինը նշանակում է մի Կողմի տարածքով ուղեւորների եւ բեռների փոխադրումներ, որոնց դեպքում մեկնման եւ նշանակման կետերը գտնվում են այդ Կողմի տարածքից դուրս:

### ՀՈՂՎԱԾ 3

Կողմերից յուրաքանչյուրը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, ընդունում է մյուս Կողմի ուղեւորների, նրանց ուղեբեռի, առետրային բեռների եւ տրանսպորտային միջոցների առնչությամբ տարանցման իրավունքը այն երթուղիներով, որոնք կորոշվեն Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմինների կողմից:

### ՀՈՂՎԱԾ 4

Կողմերից ոչ մեկը չպետք է գանձի մուտքի կամ ելքի տուրք (ներառյալ մաքսային տուրքը) կամ հարկի տուրքերով կամ հարկերով իր տարածքում գտնվող մյուս Կողմի այն տրանսպորտային միջոցները, որոնք իրավասու մարմինների թույլտվությունների հիման վրա կատարում են պարիտետային կանոնավոր ուղեւորատար եւ բեռնատար փոխադրումներ քվոտաների սահմաններում, բացի.

1) վճարովի ճանապարհների ցանցի ենթակառուցվածքի օգտագործման համար տուրքերից (ճանապարհների եւ կամուրջների օգտագործման տուրքեր)՝ այլընտրանքային անվճար ճանապարհների առկայության դեպքում,

2) գանձումներից, եթե տրանսպորտային միջոցի քաշը, չափը կամ բեռնվածությունը գերազանցում են Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված չափերը,

3) Կողմերից մեկի տարածքում գրանցված տրանսպորտային միջոցներից մյուս Կողմի տարածք մուտք գործելու համար գանձվող հարկից:

Կողմերից մեկի տրանսպորտային միջոցները մյուս Կողմի տարածքում սահմանված քվոտաներից դուրս փոխադրումներ կատարելիս չեն ազատվում հարկերից եւ վճարումներից:

### ՀՈՂՎԱԾ 5

Կողմերի կառավարությունների կողմից ստեղծվում է Կողմերի ներկայացուցիչներից կազմված խառը հանձնաժողով: Խառը հանձնաժողովի իրավասության մեջ մտնում է.

1) հսկողություն սույն Համաձայնագրի կատարման ընթացքի նկատմամբ,

2) թույլտվությունների փոխանակման ձեւի, քանակի, ժամանակի եւ եղանակի որոշում,

3) Համաձայնագրում նշված իրավասու մարմինների միջեւ անմիջականորեն չկարգավորված հնարավոր հարցերի լուծման ուղղությամբ առաջարկությունների ուսումնասիրություն եւ մշակում,

4) սույն Համաձայնագրի շրջանակներում բոլոր այլ համապատասխան հարցերի քննարկում եւ դրանց կարգավորման հանձնարարականների մշակում,

5) փոխադրումներին վերաբերող երկկողմ համաձայնեցման ենթակա ցանկացած այլ հարցերի քննարկում:

Խառը հանձնաժողովը հավաքվում է անհրաժեշտության դեպքում Կողմերից մեկի խնդրանքով՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Վրաստանում:

Խառը հանձնաժողովի նիստերում քննարկման ենթակա օրակարգը Կողմերը պատրաստում են նախօրոք՝ վերոհիշյալ իրավասությունների շրջանակներում:

Խառը հանձնաժողովը կարող է առաջարկել կատարելու ուղղումներ սույն Համաձայնագրի ցանկացած հոդվածում եւ ներկայացնել դրանք իրավասու մարմինների հաստատմանը:

### ՀՈՂՎԱԾ 6

Կողմերից մեկի փոխադրողն իրականացնում է կանոնավոր երթեր կամ կանոնավոր տարանցիկ երթեր մյուս Կողմի տարածքով՝ մյուս Կողմի իրավասու մարմինների

ամենամյա թույլտվությունը նախօրոք ստանալու դեպքում:

#### ՀՈՂՎԱԾ 7

Կողմերի իրավասու մարմինները նախօրոք փոխանակում են այդպիսի փոխադրումների առաջարկությունները:

Այդ առաջարկությունները պետք է պարունակեն տեղեկություններ՝ փոխադրողի /ֆիրմայի/ անվանման, երթուղու, չվացուցակի, սակագների, այն կետերի մասին, որոնցում փոխադրողը պետք է կանգ առնի ուղեւորների նստեցման եւ իջեցման համար, ինչպես նաեւ փոխադրումների որոշակի ժամանակահատվածի եւ պարբերականության մասին:

#### ՀՈՂՎԱԾ 8

Ավտոբուսով երկու երկրների միջեւ կամ նրանց տարածքներով՝ տարանցիկ, ուղեւորների ոչ կանոնավոր փոխադրումներ իրականացնելու համար, բացառությամբ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված փոխադրումների, պահանջվում է Կողմերի իրավասու մարմինների թույլտվությունը:

Կողմերի իրավասու մարմինները թույլտվություն կտան այն ճանապարհահատվածի համար, որն անցնում է իրենց երկրի տարածքով:

Ավտոբուսով ուղեւորների յուրաքանչյուր ոչ կանոնավոր փոխադրման համար պետք է տրվի առանձին թույլտվություն, որը տալիս է մեկ ուղեբի իրավունք այնտեղ եւ հետ, եթե այլ բան նախատեսված չէ բուն թույլտվության մեջ:

Ձեւաթղթերը պետք է ունենան թույլտվություն տվող իրավասու մարմնի կնիքը եւ ստորագրությունը:

Կողմերի իրավասու մարմինները միմյանց միջեւ համաձայնեցնում են թույլտվության ձեւաթղթերի փոխանակման կարգը:

#### ՀՈՂՎԱԾ 9

1. Ավտոբուսներով ուղեւորների ոչ կանոնավոր փոխադրումների համար թույլտվություն չի պահանջվում այն դեպքում, երբ միեւնույն կազմով ուղեւորների խումբը փոխադրվում է նույն ավտոբուսով ուղեւորության ամբողջ ընթացքում.

ա) եթե այդ ուղեւորությունը սկսվում եւ ավարտվում է այն Կողմի տարածքում, որտեղ գրանցված է ավտոբուսը,

բ) եթե այդ ուղեւորությունը սկսվում է այն Կողմի տարածքում, որտեղ գրանցված է ավտոբուսը, եւ ավարտվում է մյուս Կողմի տարածքում պայմանով, որ ավտոբուսը այդ տարածքը լքում է դատարկ:

2. Թույլտվություն չի պահանջվում անսարք ավտոբուսը ուրիշ ավտոբուսով փոխարինելիս:

3. Սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված փոխադրումները կատարելիս ավտոբուսի վարորդը պետք է ունենա ուղեւորների ցուցակը:

#### ՀՈՂՎԱԾ 10

Կողմերի տարածքներով տրանսպորտային միջոցներով բեռների փոխադրումն իրականացվում է իրավասու մարմինների կողմից նախօրոք տրված թույլտվությունների եւ քվոտաների հիման վրա, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

1) դիակի կամ աճյունի փոխադրում,

2) թատերական ներկայացումների համար դեկորի առարկաների, երաժշտական համերգների, կինոցուցադրումների եւ ռադիոհեռուստատեսային հաղորդումների համար անհրաժեշտ բեռների, սարքավորումների փոխադրում, կենդանիների փոխադրում,

3) անսարք կամ խափանված տրանսպորտային միջոցների փոխադրում,

4) փոստի փոխադրում,

5) օդանավակայաններ ու երկաթուղային կայարաններ եւ օդանավակայաններից ու երկաթուղային կայարաններից բեռների չալանավորված փոխադրումները՝ ինքնաթիռի չվերթի հարկադիր փոփոխության եւ երկաթուղում ֆորս մաժորի դեպքում,

6) տարերային աղետների դեպքում օգնություն ցուցաբերելու համար նախատեսված նյութերի փոխադրում,

7) ցուցահանդեսների եւ տոնավաճառների համար՝ վաճառքի համար չնախատեսված նյութերի փոխադրում,

8) մարդասիրական բեռների փոխադրում,

9) խառը հանձնաժողովի համաձայնեցմանը ենթակա այլ դեպքեր:

#### ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 11

Յուրաքանչյուր փոխադրման համար տրվում է տրանսպորտային միջոցի թույլտվություն մեկ երթի համար՝ այնտեղ եւ հետ:

Դատարկ տրանսպորտային միջոցի՝ մյուս Կողմի տարածք բեռնման նպատակով մուտք գործելու դեպքում պահանջվում է այն Կողմի իրավասու մարմնի թույլտվությունը, որտեղ կկատարվի բեռնումը:

#### ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 12

Թույլտվությունը գործում է մեկ տարվա ընթացքում, իսկ մյուս տարվա համար թույլտվությունը տրվում է յուրաքանչյուր տարվա նոյեմբերին:

Այն վավերական է միայն մեկ տրանսպորտային միջոցի համար եւ միայն այն փոխադրողի համար, որին տրված է այդ թույլտվությունը:

Երկու Կողմերի իրավասու մարմինները պայմանավորվում են նման թույլտվություններ տալու կանոնների եւ ձեւերի մասին:

#### ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 13

1. Կողմերի միջեւ կամ Կողմերից յուրաքանչյուրի տարածքով՝ տարանցիկ, զենքի, ռազմամթերքի, ռազմական հանդերձանքի եւ պայթուցիկ նյութերի փոխադրումը պահանջում է այդ նպատակի համար հատուկ թույլտվության ստացում:

2. Այն դեպքում, եթե վտանգավոր բեռների փոխադրումը պահանջում է հատուկ թույլտվություն, փոխադրողը այդ թույլտվությունը պետք է ստանա մյուս Կողմի իրավասու մարմիններից:

3. Ներմուծման համար արգելված, մարդկանց առողջության, կենդանիների եւ բույսերի համար վտանգ ներկայացնող բեռների՝ առանց հատուկ թույլտվության փոխադրման դեպքում փոխադրողը զրկվում է ներմուծման եւ տարանցման իրավունքից:

4. Եթե սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված թույլտվության մեջ սահմանված են փոխադրման որոշակի երթուղիներ, ապա փոխադրումներն իրականացվում են այդ երթուղիներով:

#### ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 14

Այն դեպքում, եթե բարձրված եւ դատարկ տրանսպորտային միջոցի քաշը եւ չափերը գերազանցում են մյուս Կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված չափերը, փոխադրողը պետք է ստանա այդ Կողմի իրավասու մարմինների հատուկ թույլտվությունը:

#### ՅՈՒՐԱՔԱՆԵՐ 15

Սույն Համաձայնագրին համապատասխան՝ միջազգային ավտոմոբիլային փոխադրումները պետք է համապատասխանեն ՄՃՓ գրքուկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրումների մասին 1975 թվականի միջազգային մաքսային Կոնվենցիայի

պահանջներին եւ գործող ազգային օրենսդրությանը:

#### ՅՈՒՄՆԻ 16

Սույն Յամաձայնագրով նախատեսված փոխադրումներն իրականացվում են միայն այն փոխադրողների կողմից, որոնք, իրենց երկրների օրենսդրությանը համապատասխան, ստացել են միջազգային փոխադրումներ իրականացնելու իրավունքը:

Փոխադրողին տրված թույլտվությունը ենթակա է այլ անձանց փոխանցելու:

#### ՅՈՒՄՆԻ 17

Միջազգային փոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցները պետք է ունենան իրենց երկրի պետական գրանցման համարանիշներ եւ տարբերիչ նշաններ:

#### ՅՈՒՄՆԻ 18

Փոխադրողին չի թույլատրվում կատարել ուղեւորների եւ բեռների փոխադրումներ մյուս Կողմի տարածքում գտնվող երկու կետերի միջեւ՝ առանց այդ Կողմի իրավասու մարմինների հատուկ թույլտվության:

#### ՅՈՒՄՆԻ 19

Փոխադրողն իրավունք ունի իրականացնել բեռների փոխադրում մյուս Կողմի տարածքից երրորդ երկրի տարածք, ինչպես նաեւ երրորդ երկրի տարածքից մյուս Կողմի տարածք՝ Կողմերի իրավասու մարմիններից ստացած հատուկ թույլտվության առկայության դեպքում:

#### ՅՈՒՄՆԻ 20

1. Ավտոբուսի կամ բեռնատար ավտոմեքենայի վարորդը պետք է ունենա ազգային կամ միջազգային վարորդական իրավունքներ, որոնք համապատասխանում են իր ավտոտրանսպորտային միջոցի տեսակին, ինչպես նաեւ ավտոտրանսպորտային միջոցի ազգային գրանցման փաստաթղթեր:

2. Ազգային կամ միջազգային վարորդական վկայականը պետք է համապատասխանի ճանապարհային երթուղեկության մասին միջազգային կոնվենցիայով սահմանված դրույթներին:

3. Թույլտվությունը եւ մյուս փաստաթղթերը, որոնք պահանջվում են սույն Յամաձայնագրի դրույթներին համապատասխան, պետք է լինեն ավտոտրանսպորտային միջոցում, որին վերաբերում են, եւ ներկայացվեն ստուգող իրավասու մարմնի պահանջով:

#### ՅՈՒՄՆԻ 21

Սույն Յամաձայնագրի դրույթներին համապատասխան փոխադրումն իրականացվում է միայն փոխադրողի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր նախնական ապահովագրության պայմանով:

#### ՅՈՒՄՆԻ 22

1. Սույն Յամաձայնագրի դրույթների խախտման դեպքում այն Կողմի իրավասու մարմինները, որտեղ գրանցված է ավտոտրանսպորտային միջոցը, պարտավոր են մյուս Կողմի իրավասու մարմինների խնդրանքով, որտեղ տեղի է ունեցել խախտումը, անկախ իրենց երկրի գործող օրենսդրությունից կատարել հետեւյալ միջոցառումներից մեկը.

ա) փոխադրողին նախազգուշացնել,

բ) փոխադրողին գրավոր զգուշացնել՝ հայտնելով, որ խախտումը կրկնվելու դեպքում փոխադրումներ իրականացնելու թույլտվությունը կկասեցվի որոշակի ժամկետով կամ կդադարեցվի,

գ) սույն Համաձայնագրի հիման վրա տրված թույլտվությունը կասեցնել որոշակի ժամկետով կամ դադարեցնել:

2. Կողմերի իրավասու մարմինները միմյանց տեղեկացնում են ձեռնարկված միջոցառումների մասին:

#### ՀՈԴՎԱԾ 23

Կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները ուղեւորների եւ բեռների նկատմամբ մաքսային եւ այլ ընթացակարգերը առավելագույնս հեշտացնելու, պարզեցնելու եւ արագացնելու համար:

#### ՀՈԴՎԱԾ 24

Տրանսպորտային միջոցների վառելիքի ստանդարտ բաքերում գտնվող վառելիքը ազատվում է մաքսային տուրքերից եւ վճարումներից: Վառելիքի ստանդարտ բաք է այն բաքը, որը պատրաստված է տրանսպորտային միջոցներն արտադրող գործարանի կողմից:

#### ՀՈԴՎԱԾ 25

Չօգտագործված պահեստամասերը ենթակա են վերադարձման, իսկ փոխարինված պահեստամասերը պետք է դուրս բերվեն երկրից կամ ոչնչացվեն կամ էլ հանձնվեն համապատասխան Կողմի տարածքում սահմանված կարգով:

#### ՀՈԴՎԱԾ 26

Կողմերի միջեւ տրանսպորտային կամ տարանցման գործողությունների հետ կապված վճարումը կատարվում է ազատ փոխարկելի տարադրամով եւ ընդունվում է Կողմերի լիազորված բանկերի կողմից՝ Կողմերի տարածքում գործող տարադրամի մասին օրենքներին, դրույթներին ու կանոններին համապատասխան:

#### ՀՈԴՎԱԾ 27

Վթարների, խափանման կամ այլ դժվարությունների դեպքերում այն Կողմի իրավասու մարմինները, որի տարածքում տեղի է ունեցել պատահարը, մյուս Կողմին տրամադրում են հետաքննության արդյունքները եւ այլ տեղեկություն:

#### ՀՈԴՎԱԾ 28

Կողմերից մեկի տարածքում գրանցված ավտոտրանսպորտային միջոցի փոխադրողները եւ անձնակազմը մյուս Կողմի տարածքում ենթարկվում են այդ Կողմի՝ ճանապարհային երթուղեկությունը կարգավորող օրենքներին եւ կանոններին:

#### ՀՈԴՎԱԾ 29

Սույն Համաձայնագրի կատարման համար պատասխանատու իրավասու մարմիններն են. Հայաստանի Հանրապետությունում՝ տրանսպորտի նախարարությունը, Վրաստանում՝ տրանսպորտի նախարարությունը, ավտոմոբիլային հաղորդակցության ղեկավարամետը եւ "Սաքավտոգազ" ավտոմոբիլային ճանապարհների պետական կոնցեռնը:

#### ՀՈԴՎԱԾ 30

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ծանուցագրերի փոխանակման օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով: Դրա գործողությունը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ տարով, եթե Կողմերից ոչ մեկը գործողության համապատասխան ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ գրավոր չժանուցի մյուս Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երեւան քաղաքում 1997 թվականի մայիսի 3-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, վրացերեն եւ ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Տարընթերցման դեպքում գերակայությունը տրվում է ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի փետրվարի 6-ից: